2602

82
3-69

2 NOV 2009

ԼԵՆԳՍՏՈՆ ՀՅՈՒԶ

# ՍԿՈՏՏՍԲՈՐՈ



1932

82
Հ-69

14 JUN 2005

82
Հ-69

ԼԵՆԳՍՏՈՆ ՀՅՈՒՍ

# ՍԿՈՏՏՍԲՈՐՈ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ
Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՍԱԽԵԼԳԱՄԻ
1932

12.06.2013

2602

Սրբագրիչ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ.

ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им А М…

Տպարան Պոլիգրաֆտրեստի

Պատվեր 1338 Գլավլիտ 177 Տիրաժ 4000

36327-12

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս պիեսի հեղինակը-նեգր Լենգստոն Հյուզը Ամերիկական պրոլետարական օրգան «Նոր Մասսաներ» ժուրնալի ակտիվ աշխատակիցն է։ Պիեսը գրված է Ամերիկայի Սկոտսբորո քաղաքի 9 նեգրերի դատավճռի դեմ կազմակերպվելիք բողոքի համար։ Նեգր տղաները, գրեթե յերեխաներ, (միջին հաշվով նրանք 16-17 տարեկան են, իսկ ամենափոքրը մինչև իսկ 13 տ.) կալանավորվում են Ալաբամա շտատի Սկոտսբորո քաղաքի մոտ, գնացքի մեջ, վորտեղից նրանք գնում եյին աշխատանք գտնելու։

Սրանց կալանավորվելուց առաջ տեղի է ունեցել տուր ու դմբոց մի խումբ ինչ վոր նեգրերի և տղամարդի շորեր հագած 2 փողոցային կանանց հետ ճանապարհորդող սպիտակների միջև։ Սպիտակները դեպքի մասին անմիջապես հեռագրում են մոտակա կայարանը։ Այդտեղի շերիֆը հասնելով՝ կալանավորում է վերոհիշյալ 9 տղաներին, վորոնք գաղափար անգամ չեյին ունեցել կատարված դեպքի մասին։

Տեղական բուրժուազիան գազազած նեգրերի, բանվորների և մանր հողատեր գյուղացիների հեղափոխական տրամադրության վերելքից, վճռում է դեպքը առիթ դարձնել մի հսկայական պրոցեսի, վորպեսզի դրանով ահաբեկի շտատի նեգրական ազգաբնակությանը։ Ոգտվելով գնացքի մեջ գտնված 2 փողոցային սպիտակ կանանց կալանավորման փաստից՝ կալանավորված նեգրերին մեղադրում են լինչի դատաստանի համար միշտ առիթ

ծառայող մեղադրությամբ, սպիտակ կանանց բռնաբարության մեջ։ Յեվ չնայած վոր նեգրերը կտրականապես հրաժարվում են իրենց հանցավոր ճանաչելուց, չնայելով վոր 2 կինն էլ հակառակ վոստիկանության և դատախազության ճնշման չեն կարողանում հաստատել „հանցանքի" փաստը, սակայն այնուամենայնիվ 8 նեգրերը դատապարտվում են մահապատժի, իսկ 9-րդին ցմահ բանտարկության։

Բոլոր յերկրների բանվորները հզոր բողոք բարձրացրին այդ հրեշային դատավճռի դեմ, վորի հետևանքով Ամերիկյան բուրժուազիան հարկադրվեց գործի նոր քննություն նշանակել։

Անհրաժեշտ են նոր բողոքներ, նոր ջանքեր փրկելու Սկոտսբորոյի անմեղ կալանավորներին։ Խ. Միության բանվորները պետքե հանդես բերեն ամենաակտիվ մասնակցություն այդ բողոքի կամպանիայի մեջ։

Ամբողջ աշխարհի բազմամիլիոն աշխատավորների զորաճակատը պետքե բողոքի Ամերիկյան կապիտալիզմի զոհերի պաշտպանության համար։



## Գ Ո Ր Ծ Ո Ղ  Ա Ն Ձ Ն Ի Ք

Շ ե ր ի ֆ — Հագած է կովբոյկա և յերկայնավիզ կոշիկներ, գոտկին խրած 2 ատրճանակ, գլխին լայնեզր մահուդե գլխարկ։

Դ ա տ ա վ ո ր — Դատավորական սև զգեստով. (կարելի յե նաև թիկնոց — պլաշչ) գլխին պարիկ։

Բ ա ն տ ա պ ե տ — Հագած է կուրտկա, մետաղե կոճակներով, ձեռքին խոշոր բանալիների խրձիկ։

Ք ա հ ա ն ա — Զգեստավորված է շուրջառով, վզից կախած է խաչ, ձեռքին աստվածաշունչ։

Դ ա հ ի ճ — Հագած է բանտապետի նման։

| | |
|---|---|
| Առաջին կին<br>Յերկրորդ կին | Առաջին տեսարանում հագած են աղամարդի սպեցզգեստ։ Հետագայում՝ ամրան, աժանագին և ժապավեններով զարդարված շորեր։ Զափազանց սնգուրված են։ |
| 1-ին նեգր<br>2-րդ նեգր<br>3-րդ նեգր<br>4-րդ նեգր<br>5-րդ նեգր<br>6-րդ նեգր<br>7-րդ նեգր<br>8-րդ նեգր<br>9-րդ նեգր<br>Բանվորների ձայներ։<br>Ձայներ ամբոխի միջից։ | Բոլոր նեգրերն հագած են սպեցզգեստ։ Առաջինները 13-14 տարեկան, վերջինը 20 տ. Լավ կլինի, յեթե բոլորը տեղավորված լինեն հասակի կարգով՝ սկսելով ամենակարճից վերջացնել ամենաբարձրով։ |

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Շերիֆի, դատավորի, քահանայի և դահիճի դերերը կարող է կատարել միևնույն անձը։

Ներկայացման պայմանները վերին աստիճանի պարզ են. առաջին տեսարանը ներկայացնում է ապրանքային հրապարակը, (պլատֆորմը) ուր կան մի քանի արկղ-բեռներ։ Երկրորդում՝ դեկորացիան ներկայացնում է ապրանքատար վագոն, կարելի յե նաև առանց վագոնի։ Երրորդում՝ սեղան, աթոռ և նստարան, Չորրորդում՝ բոլոր ժամանակ բանտի վանդակացանցը։ (Կարելի յե կարել քաթանից և կախել վարագույրի նման։) Հինգերորդում՝ ելեկտրական աթոռ ներկայացնող բազկաթոռ։

Ի նկատի ունենալով, որ բարդ գրիմը, (այրած խցան, կեչու փայտածուխ, մուր) նեգրերի դերերը խաղացողների ուժերից կարող են վեր լինել, ուստի մյուսներից, (սպիտակներից) տարբերվելու համար ներկայացմանը մասնակցողները պետք է գրիմներն անեն ավելի մուգ, քան մյուս գործող անձինք, ինչ որ հեշտությամբ կարելի կլինի անել՝ հիմնական մարմնագույն ներկը խառնելով շականակագույնին։

Երաժշտական միջոցներ ունենալու դեպքում, ներկայացման ժամանակ արտասանությանը զուգընթաց կարելի յե մտցնել յերաժշտություն։

Պիեսի ամբողջ նյութը հնարավոր է օգտագործել նաև բեմական բարձրաձայն ընթերցանության համար։





## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ապրանքային կայարանի հրապարակը, (պլատֆորմը։) Բոլոր իննը տղաներն էլ նստած են զանազան դիրքերով, վորն արկղի, վորն հատակին, ոտներն յերկարացնելով յեվ այլն։

6-րդ տղան-(Հեռուն նայելով, ուրախությամբ։)
Տես, գնացքն ինչպես է արագ ընթանում
Անիվների ներդաշնակ աղմուկով . . .
Տես, ինչպես արևն է փայլում վոսկեվառ,
Ինչպես գեղեցիկ է մեր տաք հարավը։
7-րդ տղան- Այո... գեղեցիկ է միայն... պատուհանից...
Սպասեցեք, կը հիշեք ինձ...
Ա՜խ, յերանի մի բան լիներ ուտելու.
Ես մի կտոր հացի համար արևի լույսը կտայի։
4-րդ տղան- Դու գոտիդ մի քիչ պնդացրու,
Չէ որ աշխատանքի յենք գնում,
Միքիչ էլ կսպասենք...

5-րդ տղան- *Իսկ յեթե ավելի վատ լինի՞,*
*Իսկ յեթե գործ չը գտնե՞նք։*
1-ին տղան- *Ինչպես թե, մի՞թե քիչ գործ կա.*
*Ալաբամայում կամ Արկանզասում...*
2-րդ տղան- *Յեթե գործ էլ լինի, կլինի սպիտակների համար, իսկ գործազրկությունը...*
5-րդ տղան- *Մեզ համար է։*
3-րդ տղան- *Ե՛հ, լռեցեք։ Հանաքները թողեք, տղերք։*
4-րդ տղան- *Ներողություն Պերկ, հանաք չենք անում։*
2-րդ տղան- *Ամեն գործ էլ ձեռներիցս կը գա,*
*Նրանցից էլ վատ չենք աշխատի։*
1-ին տղան- *Եհ, շատ էլ նեգր ենք։ Մի՞թե հարցը կաշվի մեջն է, իսկ մեր կոշտերը չե՞ն ցավում. մենք և աշխատանք ենք ուզում և կարող ենք աշխատել։*
6-րդ տղան- *Տեսեք ինչպես է այրվում հողը...*
*Այո՛ վառվում է։*
*Նրանք այրում են... այրում են բերքը...*
*Դաշտային հրդեհը անցնում է ցորենի արտերի վրայով,*
*Իսկ դու այստեղ քաղցից շան պես սատկիր։*
3-րդ տղան- *Ո՞վքեր են նրանք։*
8-րդ տղան- *Ել ով — սպիտակները։*
9-րդ տղան- *Դա պարզ է,*
*Հարուստները, հողատերերն են։*
*Հիմա ցորենի առատությունից, ելեվատորներում տեղ չունեն լցնելու,*
*Նրանց ինչ պետքն է,*
*Թե մենք այստեղ սովից ենք մեռնում.*
2-րդ տղան- *Միևնույն է, թե դու սևամորթ ես, թե սպիտակամորթ, պետքե սոված մնաս։*



9-րդ տղան- *Յեթե դու չքավոր ես, սուս ու փուս շունչդ տուր։*
*Յեթե չը պայքարես պետքե մեռնես, ընտրիր որն ուզում ես։*
8-րդ տղան- *Հարուստներն այրում են հացի բերքը...*
4-րդ տղան- *Ո՛հ, սոսկալի յե մեր յերկիրը։*
(Գնացքն հանկարծ կանգնում է: Ցնցումից տղաները ընկնում են հատակին: Մի քանիսն իսկույն դուրս են թռչում:)
Բոլորը- *Ի՞նչ պատահեց։*
3-րդ տղան- *Գնացքը կանգնեց։*
7-րդ տղան- *Ճիշտ է կանգնեց, բայց պատճառն ինչ է։*
8-րդ տղան- *Պատճառն ինչ է։*
5-րդ տղան- *Խորտակու՞մ պատահեց արդյոք։*
(Շերիֆը լայնեզր գլխարկով, կովբոյկայով յեվ յերկայնավիզ կոշիկներով դահլիճի միջից բարձրանում է բեմ: Գոտկին ունի 2 ատրճանակ:)
Շերիֆ- *Անպիտաններ ինչ եք անում այստեղ, գնացքում։*
Բոլորը միասին- *Մենք Մեմֆիս ենք գնում, գնում ենք գործ փնտրելու,*
*Մենք գործազուրկ ենք, գործ ենք փնտրում։*
Շերիֆ- (Ատրճանակներն հանելով:)
*Ցած իջեք այդտեղից, սև անպիտաններ, դե, շուտ։*
6-րդ տղան- (Անհամարձակ նայելով մյուս տղաներին)
*Մենք վոչ մի վատ բան չենք արել, միստր շերիֆ։*
9-րդ տղան- (Ատրճանակը ցույց տալով:)
*Դա ի՞նչի համար է։*
Շերիֆ- *Դե՛, դե՛, առանց խոսելու։*

(Լույսն հանգչում է:)

## ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Գնացքի մոտ դիմացի պատը բերել դեկորացիա, ապրանքատար վագոններ, (արելի յե նայել առանց դեկորացիայի:)
Տղաներն ահաբեկված հավաքվել են վագոնի առաջ:

Շերիֆ- (Ձեռները փողի նման բերանին դրած հրամայում է յերեսը գնացքին դարձրած:)
*Դուրս բերեք բոլոր այդ անպիտաններին վագոնից:* (Դառնալով դեպի տղաներին:) *Իսկ դուք, այստեղ կանգնեցեք: Տեղներիցդ չը շարժվեք:* (Նորից դառնալով դեպի գնացքը:) *Ի՞նչ, ինչ եք ասում, յերկու կի՞ն տղամարդի շորերով,* (ժպտալով:) *Այ քեզ գործ:* (Նորից տղաներին դառնալով:) *Դուք այստեղ ինչ եյիք անում այդ կանանց հետ:*

Տղաները- *Վո՞րտեղ:*

Շերիֆ- (Խստությամբ:) *Այստեղ:*

Տղաները- (Չը հասանալով:) *Ախր վո՞րտեղ:*

Շերիֆ- (Կատաղությամբ հարձակվելով տղաների վրա:) *Հիմա դուք կը տեսնեք, թե վորտեղ:*

Տղաները- (Նայելով միմյանց:) *Ի՞նչ կանայք, վոչինչ չենք հասկանում:*

(Բեմի խորքից՝ հեռվից լսվում է ամբոխի ձայնը „Անպիտան նեգրեր... Նրանք իրար հետ եյին գնում... Սպիտակ կանանց հետ... Ո՞ւր են այդ նեգրերը, ո՞ւր են այդ սրիկաները“: Բեմ են գալիս յերու կին տղամարդու բանվորական հագուստով: Յերկուսն էլ անչափ քսված պուդրայով յեվ այլ օծանելիքներով:)

Շերիֆը- (Քնքշությամբ:) *Ի՞նչ եյիք անում այստեղ, աղջիկներ, իհարկե տոմսակ չունեք:*

1-ին կինը- *Ճիշտ է, պարոն, տոմս չունենք:*

Շերիֆ- *Ո՞ւր եյիք գնում:*



1-ին կինը- *Տուն եյինք գնում, պարոն:*

Շերիֆ- *Ո՞ւր:*

2-րդ կինը- *Դեպի Խանտսվիլլ:*

Շերիֆ- (Նեգրերին ցույց տալով:) *Այդ սև անպիտաններն էլ ձեզ հետ եյի՞ն գնում:*

1-ին կինը- (Արհամարանքով նայելով դեպի նեգրերը:) *Ամենևին վոչ:*

2-րդ կին- *Նրանց մենք իսկի չենք էլ նկատել:*

Շերիֆ- *Դուք մի՛ք վախենա: Այդ սրիկաները ձեզ վորևե վնաս չը հասցրի՞ն:*

Յերկու կինը- (Զարմանքով) *Ի՞նչ վնաս: Մենք նրանց առաջին անգամն ենք տեսնում:*

Շերիֆ- (Վրդոված:) *Յես հարցնում եմ, թե այս անպիտանները ձեզ նեղություն չե՞ն տվել:*

Կանայք- (Տարակուսանքով:) *Յես... Յես... չըգիտեմ:*

Շերիֆ- (Համոզեցուցիչ յեղանակով:) *Բայց յես գիտեմ, թե այդ անպիտաններից, վորն է համարձակվել ձեզ դիպչել:*

Կանայք- (Անհամարձակ իրար նայելով:) *Չեմ... հիշում...*

Շերիֆ- (Լիովին բավարարված) *Ապա, մի լավ հիշեցեք: Մենք նրանց դատի կը հանձնենք, ապա կը խորովենք էլեկտրական աթոռի վրա: Իսկ ձեր նկարները կը տպագրվեն լրագրներում: Ապա, վո՞րն եր սրանցից:*

1-ին կինը- (Համարձակ ցույց տալով յերկու նեգրերի:) *Ահա, այս յերկուսը:*

Շերիֆ- *Միայն յերկու՞սը, մի՞թե վոչ ավելի:*

2-րդ կինը- *Գուցե և ավելի եյին: Լավ չենք հիշում:*

Շերիֆ- (Շատ գոհ:) *Հրաշալի յե, ինչ հետաքրքիր պրոցես կլինի: Մենք կանմահացնենք մեր քաղաքը:*

(Լույսը հանգչում է:)

## ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐՐՈՐԴ

Դատավորության դիմացը, սեղանի առաջ նստած է սևազգեստ դատավորը: Կողքին նստած են 2 կին, այժմ վոչ սպեզգեստով, այլ զարդարուն, խայտաբղետ հագուստով: Մյուս կողմը նստած են 9 մեղադրյալ նեգրերը՝ շրջապատված վոստիկաններով: (Կարելի յե նայել առանց վոստիկանների:)

Ամբոխային ձայներ բեմի խորքից. *Ի՞նչու չեք դատապարտում. ինչու յեք հաշվի առնում դրանց: Պետք է դրանց ցից բարձրացնել, պետք է կախել այդ անպիտաններին:*

Դատավորը- (Հանդիսավորությամբ) *մեղադրյալներ Անդի Բետլերս, Վիլլի Ջոնսոն, Կլարսիս Բենդց, Ոլեն Ջոնս, Ոզի Ջիկկինս, Ռոյ Պիրկինս, Տեդ Լուկաս, Ջարլի Վեն և Խեյֆուդ Լեյն, կանգնեցեք,* (Ցույց տալով նրանցից յուրաքանչյուրին յեվ ապա կանանցից մեկին հարցնելով:) *Դու վիրավորել ես այս կնոջը:*

1-ին տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Ուրեմն դու:*

2-րդ տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Դո՞ւ:*

3-րդ տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Ապա ուրեմն դու:*

4-րդ տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Դո՞ւ:*

5-րդ տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Դո՞ւ:*

6-րդ տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Դո՞ւ:*



7-րդ տղան- *Վոչ:*

Դատավորը- *Դո՞ւ:*

8-րդ տղան- *Վոչ:*

Դատավորը- *Դո՞ւ:*

9-րդ տղան- *Վոչ:*

1-ին կինը- (Համարձակ:) *Դրանք ստում են:*

2-րդ կինը- (Վրդովված:) *Դրանք մեզ վիրավորվեցին ապրանքատար վագոնում, գնացքը գնալու ժամանակ:*

Դատավորը- *Նեգրեր, դուք ստում եք, չեք խոստովանում:*

Տղաները- *Մենք չենք ստում, սպիտակ մարդը միշտ ասումե, վոր մենք խաբումենք, սպտակ մարդը խլում է մեր աշխատանքը, ծեծում է մեզ, իսկ հետո մեզ է մեղադրում խաբեբայության և այլ հանցանքների մեջ:*

Դատավորը- *Լռեցե՛ք, դուք պետք է միայն պատասխանեք ձեզ տրված հարցերին և վոչ թե խոսեք ու կարծիքներ հայտնեք այստեղ:* (Դառնալով ամեն մի տղային, հարցնում է ներքով:) *Ջե՞, վոր դու տարձանակ ունեյիր:*

1-ին տղան- (Զարմացած:) *Ի՞նչ եք ասում, պարոն, յես այդպիսի բան յերբեք չեմ ունեցել:*

Դատավորը- *Դու տարձանակ ունեյի՞ր:*

2-րդ տղան- *Վո՛չ:*

Դատավորը- *Իսկ դո՞ւ, տարձանակ ունեյի՞ր:*

3-րդ տղան- *Վոչ մի տարձանակ չեմ ունեցել պարոն:*

Դատավոր- *Դո՞ւ, տարձանակ ունեյի՞ր:*

4-րդ տղան- *Վոչ:*

Դատավորը- (Ձայնը բարձրացնելով:) *Իսկ դո՞ւ, տարձանակ ունեյի՞ր:*

5-րդ տղան- Մենք բոլորս անզեն էինք, պարոն։

Դատավորը- Դու ատրճանակ ունեի՞ր։

6-րդ տղան- Վո՛չ, պարոն

Դատավորը- Դու ատրճանակ ունեի՞ր։

7-րդ տղան- Վո՛չ մի ատրճանակ չեմ ունեցել։

Դատավորը- Իսկ դու, ատրճանակ ունեի՞ր։

8-րդ տղան- Ի՞նչ եք ասում, պարոն։

Դատավորը-(Վրդովված։) Դո՛ւ էլ ատրճանակ չես ունեցել։

9-րդ տղան- (Չի պատասխանում, միայն գլխով բացասական պատասխան է տալիս)

Դատավորը- (Դառնալով կանանց։) Հիմա դուք ի՞նչ կասեք, աղջիկներ։

1-ին կինը- Դրանք ստում են, պարոն դատավոր։

2-րդ կինը- Ամեն մեկի մոտն էլ ատրճանակ կար։

Դատավորը- (Տղաներին։) Ձեր բոլորի մոտ էլ ատրճանակ յե յեղել։ (Կանայք հաստատում են գլուխների դրական շարժումով։ Դատավորը դառնում է կանանց։) Այսպիսով՝ դուք ասում եք, որ նրանք անպատվեցի՞ն ձեզ։ (Կանայք նորից շարժում են գլուխները դրական մտքով։) Յեվ ձեզ յերկար տանջեցի՞ն, այնպես չէ՞։

1-ին կինը- Յերկար ժամանակ մենք հնարավորություն չունեցանք նույնիսկ թքել։

Դատավորը- Ի՞նչ թքել։

2-րդ կինը- Ծխախոտ, պարոն դատավոր։

Դատավորը- (Դառնալով դեպի հասարակությունը։) Դուք լսեցի՞ք բոլորը, պարոն յերդվյալներ, վարվեցեք այս անպիտանների հետ այնպես, որպիսի վերաբերմունքի արժանի յեն։



1-ին կինը- (Անփույթ ծիծաղելով։) Դատապարտեցեք դրանց։

2-րդ կինը- Որպեսզի խրատ լինի։
(Ամբոխի ձայնը բեմի խորքից։) Դատապարտեցեք։
Մահ դրանց՝ էլեկտրական աթոռի վրա։
Մահ անպիտաններին։

Դատավորը- (Դիմելով ժողովրդին։) Միք անհանգստանա, քաղաքացիներ։ Օրենքը խիստ է և արդարադատ։
(Բեմի խորքից լսվում է ծափահարություն։)

Ամբոխի ձայնը — Ճիշտ է։ Սպանեցեք դրանց։ Սպանեցեք։

6-րդ տղան- (Հանկարծ բարձրանում է յեվ գոռում։) Վո՛չ, վո՛չ մի դեպքում։ Ինչո՞ւ յեք ուզում մեզ սպանել, ինչո՞ւ։
(Տղաները վեր են կենում իրար ձեռք բռնելով մոտենում են բեմի առաջակողմին։)

Տղաներ — (Միասին) Դուք լսո՞ւմ եք։ Մեզ ուզում նե սպանել, մեզ, անմեղներիս ուզում են սպանել։ Դուք լսո՞ւմ եք։

(Լույսն հանգչում է։)

# ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Բանտ: Բեմի առաջակողմի վրա յերեվում են 5 վանդակապատ դռներ, դռների վանդակների ցանցի միջից նայում են դատապարտված նեգրերը, յերկուական ամեն մի կամերայից, բացի կենտրոնականից, ուր նստած է տղաներից ամենափոքրը։

**2-րդ տղան-** *Այս դժվարությունից Ազատության հույս չկա.*
*Հսկում են պահակներն արթուն.*
*Մեզ համար անխուսափելի յե ելեքտրականաթոռը։*
**3-րդ տղան-** *Բանտից դուրս գալու հույս չկա։*
*Բանտից, ուր լիքն է զոհերով։*
*Մենք ինքներս...*
*Մենք ինքներս...*
*Կռվով պետք է ձեռք բերենք մեր ազատությունը,*
**5-րդ տղան-** *Ի՞նչ յելք կարող է լինել „մահվան տնից"*
**4-րդ տղան-** (Գրգռված։)
*Վո՛չ, յելք կա, ընկերներ, հավատացեք։*
*Այնտեղ, ամբողջ աշխարհում, կանգնած է բանվոր դասակարգը,*
*Նա մեզ չի մոռանա։ Այնտեղ, են աշխատավորների միլիոնավոր մասսաները,*
*Նրանք մեզ համար պայքար կը մղեն։*
**1-ին տղան-** (Լալով։)
*Վո՛չ, մենք կը մեռնենք։ Մահն է սավառնում մեր շուրջը։*
*Մենք դարձել ենք գերի մեր թշնամի դասակարգին։*
(Ամբոխի ձայնը բեմի խորքից)- *Մահ բոլոր նեգրերին*
*Հուր ու սուր։*
*Մեր կամքն է, վոր այդ ցեղը*
*Դառնա խորոված միս։*



3637-02

(Ժողովրդի միջից բանվորական ձայներ։)
*Ընկերներ, մի՛ք հուսահատվի,*
*Մենք ձեզ լսում ենք,*
*Մենք ձեզ չենք մոռանա,*
*Մենք կարող ենք ձեզ պաշտպանել,*
*Ձեզ կը պաշտպանենք —*
*Մենք համոզված ենք դրանում։*
**6-րդ տղան-** *Յերբ արշալույսն իր լույսերը կը թափի*
*Յեվ կըբոցավառվի արևը, դեպի մեր ցեղը կը խուժի*
*Ատելության անմիտ թույնը։*
*Մեծ բավականությամբ վեր կը կենա յանկին*
*Յեվ իր պարարտ մարմինն օրորելով, ամեն կողմ*
*Առևտրական տներում, բանկերում, բորսաներում*
*Գովասանքներ կը շռայլի դահճի հասցեյին։*
*Յեվ իր գաղտնի չար մտքերը դեռևս յերկար*
*Պետք է պահի իր սրտի խորքերում:*
*«Ի՞նչ: Ի՞նչը: Ինչու՞ վոչ ամբողջ ցեղը—...»*
*Վո՛չ, յես մեռնել չեմ ուզում։*
**8-րդ տղան-** *Միայն դու:*
*Յերիտասարդությունը նրա համար չէ, վոր մեռնի,*
*Այլ իրեն չը խնայի ու պայքարի աղքատության ու սովի դեմ։*
*Վոտք վոտքի, թև թևի,*
*Յեղբայրական կուռ ճակատով:*
*Առանց խտրության ցեղի, յերկրի, լեզվի*
*Կռվել դահիճների դեմ։*
**3-րդ տղան-** *Դու իրավացի յես։ Բայց ո՞վ պետք է կռվի։*
*Հեռու չի մեր մահվան ժամը։*
**Բանվորների ձայները-** (ժողովրդի միջից։)
*Բանվոր դասակարգը Ձեզ չի մոռանա,*
*Բանվոր դասակարգը ձեզ միշտ կը պաշտպանի։*
*Սևերի, կարմրների, սպիտակների շարքերը,*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР

Ամբողջ աշխարհի քաղցածներն ու ստրուկները,
Աշխատանքի ամբողջ աշխարհը այսօր քաջությամբ
Պատրաստ է գալ ձեզ օգնելու։
Մենք կը խորտակենք ձեր բանտի դռները,
Մենք մեր ձեռքերը կը հասցնենք ձեզ։

**Բոլորը միյասին-** (բերկրությամբ)
Մենք հավատում ենք, հավատում ենք, հավատում-
ենք,
Որ յեղբայրական օգնությունը մոտ է:
(Խորքից բեմի առաջակողմն է գալիս բանտապետը, գրնգում են գոտկից կախած բանալիները։)

**Բանտապետը-** Փակեցեք բերաններդ, շուտ տեղներդ։ Կռվե՜լ։ Ապուշներ։ Չե՞ որ սա սպիտակ ցեղի սեփական հողն է։ Տերերը ձեզ ցույց կտան, թե ինչպես պետք է կռվել...

**9-րդ տղան-** Տերե՜րը։ Տեր և դահի՜ճ—մեկ ձեռքն օգնում է մյուսին, որ մի ձեռքը մյուսին ավելի շատ տա սպիտակի կամ նեգրական արյուն։ Փոխադարձ կեղծավորությամբ իրար արժեն։

**Բանվորների ձայները-** (ժողովրդի միջից:)
Ճիշտ եք ասում, ճիշտ եք ասում, տղերք։

**Բանդապետը-** (խփելով տղաներից մեկին։)
Լռեցեք։

**9-րդ տղան-** Լռե՞նք, ո՛չ, ներեցեք, յես չեմ վախենում.
Դու ուզում ես, որ լռե՞մ, ինչ ել որ լինի,
Յես իմ մասին պետք է բան ասեմ։

**Բանվորների ձայնը-** (ժողովրդի միջից:)
Քեզ համար կը խոսի կարմիր դրոշակը։

**1-ին տղան-** Տղերք, լսեցեք, տղերք, դա ճիշտ է,
Մեզ համար այս րոպեյին դրոշակները կըխոսեն։
[illegible] ել ուժեղ է կոմինտերնի դրոշակը,
Յեվ դա ամենալավ պաշտպանն է։



**6-րդ տղան-** Հիշիր, չե՞ որ մեզ ասացին, որ մենք կոմմունիստների հետ չենք կարող գործ ունենալ։

**9-րդ տղան-** Ապա ո՞ւմ հետ.
Ո՞ւմ հետ, յեթե ոչ նրանց։

**3-րդ տղան-** Յեղբայրական օգնություն ո՞վ ցույց տվեց,
Որպես իր մերձավորին, ոչ միայն մեզ,
Այլև ամբողջ հարավին։
Ոչ միայն մեզ,
Ոչ միայն մեզ,
Այլև բոլոր քաղցածներին, չքավորներին,
Հացից ու ազատությունից զրկվածներին։
(Մտնում է քահանան աստվածաշունչը ձեռքին:)

**Քահանան-** Համբերություն ունեցեք զավակներս, աստծո առաջ հավասար են սևերն ել, սպիտակներն ել։

**Տղաները-** Բայց սպիտակ մարդիկ ուզում են սպանել մեզ։

**Քահանան-** Ոչ թե մարդիկ, այլ օրենքը, զավակներս։
Յես յեկել եմ ձեզ հետ միասին աղոթելու։

**3-րդ տղան-** Ո՞ւմ աղոթել։ Սպիտակ տերերի աստծո՞ւն, այն աստծուն, որը մեզ դեպի մահ է ճամփում։
Ոչ մի դեպքում։

**6-րդ տղան-** Հեռացիր այստեղից, տերտեր։
(Հնչում է մահապատժի զանգը)

**9-րդ տղան-** Մենք չենք ուզում ոչ աղոթք և ոչ ել ումխիթարություն։ Մենք ազատություն ենք ուզում, ապրել ենք ուզում։ Ուզում ենք տեսնել արևը, յերկինքը։ Քո ամեն մի աղոթքը նողկալի կեղծիք է։ Հեռացիր այստեղից։

**Քահանան-** Որ այդպես է, դե մեռեք, նզովյալ նեգրեր։
(Լույսն հանգչում է:)

# ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ելեկտրական աթոռ: Կանգնած է դահիճը: Մի կողմում՝ շարքով յեվ իրար ձեռք բռնած կանգնած են նեգրերը:

**Ամբոխի ձայնը-** (Բեմի խորքից:) *Մահ դրանց:*

**Դահիճը-** (Ցույց տալով աթոռը:) *Դեհ:*

*(9-րդ* տղան մոտենում է աթոռին յեվ նստում անվրդով: Դահիճը փոկերով կապում է նրան աթոռի թիկունքին յեվ թեվերին:)

**9-րդ տղան-** *Յես կը խոսեմ բոլորից բարձր ու համարձակ: Սպանեցեք ինձ: Յես մեռնում եմ առանց լքման: Առաջինն ինձ սպանեցեք: Յես նստում եմ այս աթոռին առանց սարսափի:*

**Ամբոխի ձայնը-** *Սպանեցեք դրանց:*
*Կեցցե Լինչի դատաստանը:*

**9-րդ տղան-** *«Սպանեցեք դրանց». վաղուց ծանոթ աղաղակ է,*
*Մեր ամբողջ կյանքում մեր գլխի վերևը կախված է այդ խայթը*
*Յեվ ամեն որ, և ամեն ժամ, և ամեն վայրկյան*
*Ամբոխը միշտ մեզ սպառնացել է:*

**Տղաները-** (Միասին) *Սպանեցեք դրանց, վաղուց ծանոթ աղաղակ է: Մեր ամբողջ կյանքում մեր գլխի վերև կախված է այդ խայթը:*
*Յեվ ամեն որ, և ամեն ժամ, և ամեն վարկյան*
*Ամբոխը մեզ միշտ սպառնացել է:*

**Ամբոխի ձայնը** *Մահ դրանց, դեպի ելեկտրական աթոռ:*
*Սպանեցեք դրանց: Այրեցեք: Կախեցեք:*

**Տղաները-** (Միասին) *Դեհ շուտ արա.*
*Դահիճ, մոտեցիր համարձակ:*
*Պատրաստենք կողք կողքի շարվելու:*



*Նստեցրեք մեզ:*
*Այրեցեք մեզ,*
*Մենք ներում չենք խնդրում:*

**9-րդ տղան-** *Ինը հոգով մենք չենք մեռնի—*
*Ելեկտրական աթոռի վրա:*
*Ահա այն կողմը լսվում է*
*Պրոլետարական փողոցների*
*Ահավոր աղմուկը:*
*Միլիոններին այրելու հնար չկա,*
*Նրանց չի կարելի վոչնչացնել:*
*Բավական է հլու ստրուկներ մնալ:*
*Լսեցեք հրաժեշտիս ամբողջ խոսքը:*
*Յես ուզում եմ խոսել:*

**Մի բանվորի ձայն-** *Նա պետք է խոսի: Լսեցեք:*

**Ամբոխի ձայնը-** *Լռիր, անպիտան նեգր. Լռիր:*

**Բանվորի ձայնը-** *Թող խոսի:*

**Տղաները** (Միասին) *Լսեցեք, լսեցեք:*

**9-րդ տղան-** *Ամբողջ մարդկություն, դու լսիր մեր ձայնը,*
*Նա վորոտում է կապույտ յերկնի տակ:*
*Լսիր մեծ ու ազատ* С С С Р.

**Տղաները-** (Միասին) *Մենք չենք հանդուրժում:*

**Ամբոխի ձայնը-** *Դրանց հետ չպետք է մեղմ վարվել, այրեցեք դրանց: Շուտ, շուտ: Դեպի ելեկտրական աթոռ:*

**9-րդ տղան-** *Յեղբերք:*
*Յեղբերք:*
*Յեղբերք:*
*Բավական յերկար տանջվեցինք,*
*Բավական յերկար ստրկաբար ապրեցինք,*
*Մեր թիկունքները ցավեցին ու ընկճվեցին:*
*Բավական է, շատ ենք լռել,*

Այսօր այլևս չը պետք է լռենք։
Մեզ կերակրում էյին մտրակով ու հոգևոր սնունդով
Հողատերը, պլանտատորը, միսիոները։
Այսօր իր ահավոր ձայնն է բարձրացրել
Քաղցած ու աղքատ նեգրը։
Գլուխ է բարձրացրել ազատ նեգրը։
**Տղաներ-** (Միասին) Ահավոր, քաղցած ու աղքատ նեգրը
Գլուխ է բարձրացրել իր ազատության համար։
**Բանվորի ձայնը** Ազատ նեգրը։
**Տղաներ-** (Միասին) Բավական յերկար ստրկաբար ապրեցինք,
Մեր թիկունքները ցավեցին ու ընկճվեցին։
Դարերով հարկ ենք տվել խավարին.
Այսօր մենք առաջվանը չենք.
Լուսավորում և ուսուցանում է СССР-ի օրինակը,
Փայլում է լուսավոր փարոսի նման։
Գլուխը բարձրացրել է ահավոր նեգրը,
Գլուխը բարձրացրել է ազատագրված նեգրը։
**9-րդ տղան** Սևի, սև օրերը վերջացան
Մենք այժմ մենակ չենք։
**Տղաներ-** (Միասին) Մենք մենակ չենք։
**Բանվորների ձայներ** Դուք մենակ չեք։ Մոսկվայում,
Բեռլինում և Պարիզում
Կտրել անցել են սահմանները, օվկիանոսը,
Ձեզ են հետևում, ձեզնով են շնչում
Բոլոր պրոլետարները, բոլոր յերկրների։
**9-րդ տղան-** Ամբողջ աշխարհն այժմ տագնապի մեջ է.
Հարավ, հյուսիս, արևմուտք և արևելք



Կողք կողքի գնում են համերաշխ
Կանգնեցնելու սպառնացող ելեկտրական հոսանքը։
**Տղաներ-** (Միասին։) Կանգնեցնելու սպառնացող ելեկտրական հոսանքը։
**9-րդ տղան.** Նրանք բոլորը ձուլվել են մի ընդհանուր գաղափարով
Սևն ու սպիտակն իրար ձեռք բռնած,
Պրկվել են մկանները բոլոր ցեղերի։
Կողք-կողքի. մի զորասյունով
Խտացրել է շարքերը բանվոր դասակարգը.
Նա ամենուրեք կռվում է մեզ համար։
**Տղաներ-** (Միասին։) Նա ամենուրեք կռվում է մեզ համար։
**Բանվորների ձայներ-** Ճիշտ է տղերք, վոտք վոտքի, թև թևի։
(Դահլիճի միջից բարձրանում են բեմ, կանգնում են տղաների հետ յեվ միասին անցնում են առաջակողմը):
**Տղաներ-** Մենք կռվից չենք վախենում։
**Բանվորներ-** Մենք կռվից չենք վախենում։
**9-րդ տղան-** Նոր կյանքի համար։
**Բանվորներ-** Նոր կյանքի համար,
(բռնում են իրար ձեռք)
**Տղաներ-** Միասին։
**Բանվորներ-** Այո։
**Տղաներ-** Սևերն ու սպիտակները
**Բանվորներ-** Միասին։
**9-րդ տղան-** Ապրել ու կռվել։
**Բոլորը միասին-** Կռվել։
**9-րդ տղան-** Մարտիկի սիրտը կռիվներում է կոփվում։
Դառնանք մենք այդպիսի մարտիկներ։

**Բոլորը միասին**. *Մենք այդպիսի մարտիկներ կը դառնանք։*

**9-րդ տղան**. *Սև ու սպիտակ պրոլետարները*
*Միասին կը գնան դեպ պայքար։*
*Նոր կյանքի համար, լավ կյանքի համար,*
*Չքավորի ազատագրման և յերջանկության համար։*

**Բոլորը միասին**. *Միասին վոտք վոտքի, թև թևի,*
*Այն ժամ մենք կը լինենք անհաղթելի։*

**Տղաները**. *Ու մենք չենք մեռնի։ Մենք կապրենք և կը պայքարենք։*

**Բանվորները**. *Այո, դուք պետք է ապրեք և պայքարեք։*

**9-րդ տղան**. *Ուրեմն դեպի պայքար, ազատության ու ապրելու համար։*

**Բոլորը**. *Դեպի պայքար, դեպի պայքար, դեպի պայքար։*

(Իրար ձեռք բռնած յերգում են ինտերնացիոնալ։)

**ՎԵՐՋ**

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясн...
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ХЮС

**Скоттсборо**

Госиздат Грузии
Тифлис — 1932 г.

ՀՀ Ազգային գրադարան
NL0170897